

Մասնագիտության նկարագիրը

Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	Մասնագիտությունը՝ 0821.01.4 «Անտառային տնտեսություն» 0821.01.01.4 Որակավորումը՝ «Անտառապահ»
I. Դերը	Անտառապահը, իրեն հանձնված պահաբաժնում, օրենքով նախատեսված նորմերին համապատասխան, իրականացնում է կանխարգելիչ միջոցառումներ և հսկողություն ոչ օրինական անտառահատումների, անտառի կողմնակի օգտագործման, հրդեհների, ինքնակամ զավթումների և օրենսդրությամբ արգելված անտառային կենսաբազմազանությանը վնաս պատճառող այլ գործողությունների նկատմամբ: Անտառախախտումների վերաբերյալ իրազեկում կամ անհրաժեշտության դեպքում կազմում է արձանագրություններ և սահմանված ժամկետում ներկայացնում համապատասխան մասնագետներին և վերադաս մարմիններին:
Խնդիրների բնագավառ 1. Անտառի պաշտպանություն՝ սանիտարական վիճակի հսկողություն	
Աշխատանքային գործընթացը	- ծառաթփատեսակների հիվանդություններով և վնասատուներով վարակված օջախների բացահայտում, -անտառային տարածքում հայտնաբերված հիվանդություններով և վնասատուներով վնասված օջախների տարածման վայրի գրանցում, կողմնորոշիչ սարքերի միջոցով կամ քարտեզի վրա, -հայտնաբերված օջախների վերաբերյալ իրազեկում վերադաս մարմինին:
Կատարման չափանիշներ	- ծառաթփատեսակների հիվանդությունների և վնասատուների օջախները բացահայտված են, -անտառային տարածքում հայտնաբերված հիվանդություններով և վնասատուներով վնասված օջախների տարածման վայրը գրանցված է կողմնորոշիչ սարքերի միջոցով կամ քարտեզի վրա, -հայտնաբերված օջախների մասին իրազեկված է վերադաս մարմինին:
Խնդիրների բնագավառ 2. Անտառի պահպանություն՝ հատումներ	
Աշխատանքային գործընթացը	-իրեն հատկացված պահաբաժնում հատումն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձանց փաստաթղթերի ստուգում, -ապօրինի հատումների, ծառերի և թփերի վնասման ու ոչնչացման դեպքերի հայտնաբերում և կանխարգելում, -հայտնաբերված անտառախախտման դեպքում արձանագրության կազմում և ներկայացում վերադասին:
Կատարման չափանիշներ	-իրեն հատկացված պահաբաժնում հատումն իրականացնող ֆիզիկական անձանց փաստաթղթերը ստուգված են, -ապօրինի հատումների, ծառերի և թփերի վնասման ու ոչնչացման դեպքերը հայտնաբերված և կանխարգելված են,

	-հայտնաբերված անտառխախտման դեպքում արձանագրությունը կազմված է և ներկայացված վերադասին:
Խնդիրների բնագավառ 3. Անտառի պահպանություն՝ որսորդություն	
Աշխատանքային գործընթացը	- անտառային տարածքում ֆիզիկական և իրավաբանական անձանց որսորդությամբ զբաղվելու թույլտվության փաստաթղթի ստուգում, -որսորդական տնտեսության կազմակերպման համար որսահանդակների որակի պահպանության վիճակի ստուգում, -ապօրինի որսի հայտնաբերում և արգելում, -որսագողության մասին արձանագրության կազմում և անմիջապես ներկայացում վերադասին:
Կատարման չափանիշներ	- անտառային տարածքում որսորդությամբ զբաղվելու թույլտվության փաստաթղթերը ստուգված են, - որսորդական տնտեսության կազմակերպման համար որսահանդակների որակի պահպանության վիճակը ստուգված է, -ապօրինի որսը հայտնաբերված և արգելված է, - որսագողության մասին կազմված է արձանագրություն և ներկայացված է վերադասին:
Խնդիրների բնագավառ 4. Անտառի պահպանություն՝ հրդեհներ	
Աշխատանքային գործընթացը	-շրջայցերի ժամանակ հակահրդեհային մեկուսիչ գոտիների, պաշտպանական հանքայնացված շերտերի, դյուրավառ թափոնների առկայության, առավել հրդեհավտանգ հատվածներում հրդեհային անվտանգության կանոնները պահպանելու մասին ցուցանակների ստուգում, -պահաբաժնում հրդեհի օջախների հայտնաբերում և ահազանգում վերադասին, -հրդեհավտանգ ժամանակահատվածում, անհրաժեշտության դեպքում բակչության և տրանսպորտի միջոցների մուտքի արգելում կամ սահմանափակում, -հրդեհի մարման միջոցառումների կազմակերպում, -անտառխախտման վերաբերյալ արձանագրության կազմում:
Կատարման չափանիշներ	-շրջայցերի ժամանակ հակահրդեհային մեկուսիչ գոտիների, պաշտպանական հանքայնացված շերտերի, դյուրավառ թափոնների առկայության, առավել հրդեհավտանգ հատվածներում հրդեհային անվտանգության կանոնները պահպանելու մասին ցուցանակների վիճակը ստուգված է, -պահաբաժնում հրդեհի օջախները հայտնաբերված է և ահազանգված վերադասին,

	<p>-հրդեհավտանգ ժամանակահատվածում, անհրաժեշտության դեպքում բակչության և տրանսպորտի միջոցների մուտքը արգելված է կամ սահմանափակված,</p> <p>-հրդեհի մարման միջոցառումները կազմակերպված է,</p> <p>-անտառխախտման վերաբերյալ արձանագրությունը կազմված է:</p>
<p>Խնդիրների բնագավառ 5 . Կողմնակի անտառօգտագործում</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>- ստուգում է պահաբաժնում ոչ բնափայտային անտառանյութի՝ ծառաթփատեսակների սերմերի, վայրի պտուղների ու հատապտուղների, սնկերի, դեղաբույսերի և տեխնիկական հումքի հավաքի և մթերման, ինչպես նաև մեղվանոցների փեթակների տեղադրման, խոտհնձի և արածեցման համար անտառօգտագործման պայմանագրի և անտառային տոմսի առկայությունը,</p> <p>-հետևում է, որպեսզի անտառօգտագործումն իրականացվի առանց անտառին վնաս պատճառելու,</p> <p>-արգելում է պահաբաժնում ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված բույսերի հավաքը,</p> <p>-անտառխախտման հայտնաբերման դեպքում կազմվում է արձանագրություն և հանձնվում վերադասին:</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>-պահաբաժնում ոչ բնափայտային անտառանյութի՝ ծառաթփատեսակների սերմերի, վայրի պտուղների ու հատապտուղների, սնկերի, դեղաբույսերի և տեխնիկական հումքի հավաքի և մթերման, ինչպես նաև մեղվանոցների փեթակների տեղադրման, խոտհնձի և արածեցման համար անտառօգտագործման պայմանագրի և անտառային տոմսի առկայությունը ստուգված է,</p> <p>-անտառօգտագործումն իրականացված է առանց անտառին վնաս պատճառելու,</p> <p>-պահաբաժնում ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված բույսերի հավաքը արգելված է,</p> <p>անտառխախտումը հայտնաբերված է,</p> <p>կազմված է արձանագրություն և հանձնված վերադասին:</p>
<p>Խնդիրների բնագավառ 6. Անտառի պահպանություն՝ անտառօգտագործում, բնափայտի և երկրորդական անտառանյութի մթերում</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>-փայտանյութ տեղափոխողներից բացթողման պիտակի և հատային հաշվառման տեղեկագրի ստուգում,</p> <p>-փայտանյութի փաստացի տեղափոխման հետ փաստաթղթերում հայտնաբերված անհամապատասխանությունների դեպքում</p>

	<p>արձանագրության կազմում և հանձնում վերադասին,</p> <ul style="list-style-type: none"> -փաստաթղթերի բացակայության դեպքում փայտանյութի տեղափոխումը դադարեցվում է և տեղեկացվում վերադասին, -երկրորդական անտառանյութի մթերման կանոնների պահպանման հսկողություն և անտառահատման տոմսի ստուգում, -կոճղերի մթերման համար թույլտվության ստուգում, -փաստաթղթերի բացակայության դեպքում արձանագրության կազմում և ներկայացում վերադասին:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> -փայտանյութ տեղափոխողներից բացթողման պիտակը և հատային հաշվառման տեղեկագիրը ստուգված է, -փայտանյութի փաստացի տեղափոխման հետ փաստաթղթերում հայտնաբերված անհամապատասխանությունների դեպքում արձանագրությունը կազմված է և հանձնված վերադասին, -փաստաթղթերի բացակայության դեպքում փայտանյութի տեղափոխումը դադարեցված է և տեղեկացված վերադասին -կատարված է երկրորդական անտառանյութի մթերման կանոնների պահպանման հսկողություն և անտառահատման տոմսի ստուգում, -կոճղերի մթերման համար թույլտվությունը ստուգված է -փաստաթղթերի բացակայության դեպքում արձանագրությունը կազմված է և ներկայացված վերադասին:
Խնդիրների բնագավառ 7. Շրջայցերի կատարում	
Աշխատանքային գործընթացը	<p>-ոտքով կամ տարբեր փոխադրամիջոցների օգնությամբ շրջայցեր կատարել՝ անտառի պահաբաժնում պարզելու համար վերջինիս վիճակը, ինչպես նաև բացահայտել ցանկացած անօրինական գործողություն:</p>
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> -շրջայցերը կատարված են, -անտառի պահաբաժնի վիճակը պարզված, -բացահայտված է ցանկացած անօրինական գործողություն:
III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/	<p>Անտառապահը պատասխանատու է.</p> <ul style="list-style-type: none"> -իրեն վերապահված աշխատանքի որակի համար, -իր պաշտոնական պարտականությունների թերացման կամ ոչ պատշաճ կատարման համար, -անտառտնտեսության կանոնադրությամբ հաստատված օրենքների և պահանջների խախտման համար, -ՀՀ օրենսգրքում ամրագրված վարչական, քրեական և քաղաքացիական որոշակի իրավախախտումների համար -տնտեսությանը նյութական վնաս հասցնելու համար,

	<p>-իրեն տրված հանձնարարությունների, հրամանների և գաղտնի տեղեկատվության պահպանման համար,</p> <p>-տնտեսության ներքին կարգապահության, տեխնիկական և հակահրդեհային անվտանգության համար:</p>
. Լեզուները	<p>հայերեն - լավ</p> <p>երկու օտար լեզու - բավարար</p>
V. Համակարգիչը	<p>- MS office՝ լավ</p> <p>- Internet՝ լավ</p>
I. Գիտելիքները	<p>հաղորդակցություն,</p> <p>անվտանգության կանոնների իմացություն,</p> <p>առաջին բուժօգնություն,</p> <p>ծառագիտության հիմունքներ,</p> <p>անտառագիտության հիմունքներ,</p> <p>անտառային քարտեզագրման հիմունքներ,</p> <p>-պահաբաժնի տոպոգրաֆիական, լանդշաֆտային և անտառային բուսականության պայմանները և առանձնահատկությունները,</p> <p>անտառի սանիտարական անվտանգության կանոնները,</p> <p>-անտառի հակահրդեհային անվտանգության կանոնները,</p> <p>-անտառի վնասակար հիվանդությունների և վնասատուների տարածման նախանշաններ,</p> <p>-անտառային հրդեհների մարման միջոցները,</p> <p>-կանգուն ծառերի բացթողման կարգը,</p> <p>անտառի խոտհնձի, արածեցման, որսի և այլ կողմնակի օգտագործման կանոնները,</p> <p>-կարգապահության, նյութական, վարչական և քրեական պատասխանատվության հաստատված նորմերը անտառխախտումների դեպքում,</p> <p>-անտառապահի աշխատանքին վերաբերող հրահանգները, հանձնարարականները և կարգադրություններն ու դեկավարման այլ նյութերը,</p> <p>-անտառօգտագործման տարբեր տեսակների համար փաստաթղթերի ձևակերպման և հանձնման կարգը,</p> <p>-անտառխախտման տարբեր տեսակների և որսի կանոնների խախտման դեպքում արձանագրությունների կազմում և ներկայացում համապատասխան մարմիններին,</p> <p>-անտառի ցանքի և տնկման տեխնոլոգիա և աշխատանքների կազմակերպում,</p>

	<p>-աջակցություն բնական վերականգնմանը, -անտառային կուլտուրաների խնամք, -անտառի կողմնակի օգտագործում, -անտառային սերմերի, դեղաբույսերի, սննդային մթերքների և տեխնիկական հումքի հավաքման տեխնիկական պայմանների և մթերման կարգը, անտառային գործիքներ ու սարքավորումներ:</p>
<p>VII. Կարողությունները և հմտությունները</p>	<p>Պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> - աշխատանքային վայրում գործունեություն կազմակերպել, - ըստ իրավիճակի, մասնագիտական տեղեկություններ տրամադրել, - աշխատանքների կատարման առավել արդյունավետ տարբերակներ ընտրել, -փոփոխվող աշխատանքային պայմաններում հիմնավոր որոշումներ կայացնել, - արտակարգ իրավիճակում արագ կողմորոշվել և որոշումներ ընդունել, -ներքին կարգը, հակահրդեհային և տեխնիկայի անվտանգության կանոնները պահպանել, - ցուցաբերել անհրաժեշտության դեպքում առաջին օգնություն, - օգտվել մասնագիտական գրականությունից, - ընտրել, հավաքել և օգտագործել անհրաժեշտ սարքեր, սարքավորումներ, - ճշգրիտ գրանցել արդյունքները , - օգտվել նորմատիվային փաստաթղթերից, ստանդարտներից և տեխնիկական պայմաններից, <p>կազմել արձանագրություններ, -կազմել հաշվետվություններ և այլ փաստաթղթեր, -անտառային տեխնիկին կամ ինժեներին ցուցաբերել օգնություն, իրեն հատկացված պահաբաժնում անտառտնտեսական և անտառմշակույթային, կողմնակի օգտագործման, անտառանյութի ուղեմերձման աշխատանքներում, ինչպես նաև բնական պայմաններում անտառտնտեսվարության սահմանների, սահմանագծային նշանների, անտառուղիների, դիդակետների անցկացման գործում:</p>
<p>VIII. Անձի որակական հատկանիշներ</p>	<p>Պարտաճանաչ, կարգապահ, հաղորդակցվող, խնայող, ճշտապահ, մաքրասեր, աշխատասեր, օժտված բարձր պատասխանատվությամբ:</p>